Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Երևան քաղաքի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում», «Երևան քաղաքի «Նորք տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղի մեխանիկական արհեստանոցի կառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի կահավորում», «Տավուշի մարզի Ազատամուտ գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի ջրատարի վերակառուցում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Քիստոնեական ժամանակակակից ընտանիքն իբրև հասարակության հենք» գրքույկի տպագրում» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Արարատի մարզի Փոքր Վեդու համայնքի մշակույթի տան արտաքին դռների և պատուհանների փոփոխում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ոռոգման ցանցի վերանորոգում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք գյուղում», «Խմելու ջրագծի կառուցում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա գյուղում», «Խմելու ջրի կապտաժի վերանորոգում և ցանկապատում, դիտահորի պատրաստում, d75 խողովակի 260 Գ/Մ հատվածի փակում նորով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր գյուղում» ծրագրերը.

«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցում և հագեցում» ծրագիրը.

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագիրը.

«Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: